ՎԱՐԿԻ ՀԱՄԱՐԸ 9202-AM

Վարկային համաձայնագիր

(«Հիվանդությունների կանխարգելման եւ վերահսկման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում»)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ

ՄԻՋԵՎ

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) եւ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ (Բանկ) միջեւ Ստորագրման ամսաթվով թվագրված ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ: Վարկառուն եւ Բանկը սույնով համաձայնում են հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.01. Ընդհանուր պայմանները (ինչպես սահմանված են սույն Համաձայնագրի հավելվածում) տարածվում են սույն Համաձայնագրի վրա եւ վերջինիս մասն են կազմում:

1.02. Եթե համատեքստով այլ բան չի պահանջվում, ապա սույն Համաձայնագրում մեծատառերով կիրառվող եզրույթներն ունեն այն իմաստը, որը վերջիններիս տրվել է Ընդհանուր պայմաններում կամ սույն Համաձայնագրի Հավելվածում:

ՀՈԴՎԱԾ II. ՎԱՐԿԸ

2.01. Բանկը համաձայնում է սույն Համաձայնագրի Լրացում 1-ում նկարագրված ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորմանն աջակցելու նպատակով Վարկառուին փոխառություն տալ յոթ միլիոն չորս հարյուր հազար դոլար (7,400,000 ԱՄՆ դոլար), եւ այդ գումարը ժամանակ առ ժամանակ կարող է փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով (Վարկ):

2.02. Վարկառուն կարող է Վարկային միջոցներն առհանել սույն Համաձայնագրի Լրացում 2-ի III բաժնին համապատասխան:

2.03. Միանվագ կոմիսիոն վճարը կազմում է Վարկի գումարի մեկ տոկոսի մեկ չորրորդը (0.25%):

2.04. Պարտավորության վճարը տարեկան կազմում է Վարկի չառհանված

մնացորդի մեկ տոկոսի մեկ չորրորդը (0.25%)։

2.05. Տոկոսադրույքը կազմում է Կողմնորոշիչ դրույքաչափին զումարած Փոփոխական սպրեդը կամ այնպիսի դրույքաչափ, որը կարող է կիրառվել Փոխարկումից հետո՝ Ընդհանուր պայմանների 3.02(ե) բաժնի համաձայն։

2.06. Վճարման ամսաթվերն են ամեն տարվա մայիսի 15-ը եւ նոյեմբերի 15-ը։

2.07. Վարկի մայր գումարի մարումն իրականացվում է սույն Համաձայնագրի Լրացում 3-ին համապատասխան։

ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳԻՐԸ

3.01. Վարկառուն իր հանձնառությունն է հայտնում Ծրագրի նպատակի առնչությամբ։ Այդ նպատակով Վարկառուն ԱՆ-ի եւ վերջինիս ԱԾԻԳ-ի միջոցով ՊԱԳ-ի օգնությամբ կիրականացնի Ծրագիրը՝ Ծրագրի Մաս 1 (ա)-ի մասով՝ Ընդհանուր պայմանների IV հոդվածի դրույթներին եւ սույն Համաձայնագրի Լրացում 2-ին համապատասխան։

ՀՈԴՎԱԾ IV. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ

4.01. Ուժի մեջ մտնելու ժամկետը Ստորագրման ամսաթվից հետո հարյուր քսաներորդ (120) օրն է։

ՀՈԴՎԱԾ V. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ՀԱՍՑԵՆԵՐ

5.01. Վարկառուի ներկայացուցիչը Ֆինանսների նախարարն է։

5.02. Ընդհանուր պայմանների 10.01 բաժնի նպատակներով՝

ա) Վարկառուի հասցեն է՝

Ֆինանսների նախարարություն

Մելիք-Ադամյան 1 փողոց

Երեւան, 0010

Հայաստանի Հանրապետություն, եւ

բ) Վարկառուի էլեկտրոնային հասցեն է՝

Ֆաքսիմիլ՝	Էլ. փոստ՝
+37411800132	secretariat@minfin.am

5.03. Ընդհանուր պայմանների 10.01 բաժնի նպատակներով՝

ա) Բանկի հասցեն է՝

International Bank for Reconstruction and Development

1818 H Street, N.W.

Washington, D.C. 20433

United States of America, եւ

բ) Բանկի էլեկտրոնային հասցեն է՝

Տելեքս՝	Ֆաքսիմիլ՝	Էլ. փոստ՝
248423(MCI) կամ 64145(MCI)	1-202-477-6391	sbossoutrot@worldbank.org

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է Ստորագրման ամսաթվի դրությամբ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

_____ կողմից
Լիազորված ներկայացուցիչ

Անուն՝ Ատոմ Ջանջուղազյան

Պաշտոն՝ Ֆինանսների նախարար

Ամսաթիվ՝ Փետրվարի 18, 2021թ.

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿ

_____ կողմից
Լիազորված ներկայացուցիչ

Անուն՝ Սիլվի Բոսութոո

Պաշտոն՝Հայաստանի համար պատասխանատու ղեկավար

Ամսաթիվ՝ Փետրվարի 18, 2021թ.

ԼՐԱՑՈՒՄ 1

Ծրագրի նկարագրությունը

Ծրագրի նպատակն է (i) ավելացնել ընտրված ՈՎՀ-ների հայտնաբերումը ԱԱՊ մակարդակում եւ հղի մայրերի շրջանում, (ii) բարելավել ընտրված հիվանդանոցների արդյունավետությունը եւ որակը եւ (iii) կանխարգելել, հայտնաբերել COVID-19-ով պայմանավորված վտանգը եւ արձագանքել դրան։

Ծրագիրը կազմված է հետեւյալ մասերից.

Մաս 1. Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում՝ ԱԱՊ հաստատություններում ՄՄԱ ծառայությունները եւ ՈՎՀ ծառայությունները բարելավելու նպատակով

ա) Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման սխեմայի իրականացում հետեւյալի միջոցով. (i) փոխհատուցում Համապատասխան ԱԱՊ հաստատություններում Թույլատրելի սկրինինգային թեստերի իրականացման դիմաց, (ii) Կատարողականի վրա հիմնված խրախուսման միջոցների տրամադրում ԱԱՊ հաստատություններին՝ նրանց կատարողականի մակարդակի ապահովման դիմաց, եւ (iii) լրացուցիչ փոխհատուցման տրամադրում Համապատասխան ԱԱՊ հաստատություններում Թույլատրելի սկրինինգային թեստերի իրականացման դիմաց այն դեպքերում, երբ հիշյալ Համապատասխան ԱԱՊ հաստատությունները գերազանցում են սկրինինգների համար սկզբնական թիրախները, որոնք սահմանվում են ԱԱՊ կատարողականի համապատասխան համաձայնագրերում եւ ԿՀՖ ձեռնարկում։

բ) (i) Գործառնական ծախսերի տրամադրում ՊԱԳ-ին՝ Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման սխեման իրականացնելու նպատակով, (ii) Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման սխեմայի, սկրինինգային ծրագրերի իրականացման եւ ՈՎՀ կառավարման թեմայով վերապատրաստում եւ կարողությունների զարգացմանն ուղղված

միջոցառումներ՝ հիմնական շահագրգիռ կողմերի համար, (iii) առաջին անհրաժեշտության սարքավորումներ ԱԱՊ հաստատություններում եւ ընտրված հիվանդանոցներում սկրինինգային ծրագրերի համար, (iv) աջակցություն առողջության խթանման միջոցառումների իրականացմանը, այդ թվում նաեւ ազգային հանրային տեղեկատվական արշավի իրականացում՝ ուղղված առողջ ապրելակերպի խթանմանը՝ նպատակ ունենալով բարձրացնել բնակչության իրազեկությունը ՈՎՀ-ների հետ կապված լուրջ ռիսկերի մասին, (v) աջակցություն թիրախային տարիքային խմբում գտնվող անհատներին ներառող տնային տնտեսություններին անձնական հրավերների իրականացմանը՝ սկրինինգների համար պահանջարկ առաջացնելու համար, (vi) աջակցություն ՈՎՀ սկրինինգի ուղենիշների վերաբերյալ ԱԱՊ տրամադրողների համար կարճաժամկետ վերապատրաստումների անցկացմանը, (vii) աջակցություն առողջապահական ոլորտի կատարողականի համազգային գնահատման ուսումնասիրությանը եւ առողջապահական ազգային հաշիվներին, (viii) մանկաբարձների եւ գինեկոլոգների համար խորացված վերապատրաստում կոլպոսկոպիայի վերաբերյալ, (ix) ընտրված հիվանդանոցների համար կրիոթերապիայի բժշկական սարքավորումներ՝ արգանդի վզիկի քաղցկեղի վաղ փուլերի կառավարման նպատակով, (x) ՏՏ սարքավորումներ՝ Համապատասխան ԱԱՊ հաստատությունների համար։

<u>Մաս 2.</u> <u>Ընտրված հիվանդանոցների արդյունավետության եւ որակի բարելավում</u>

ա) Աջակցություն մարզային հիվանդանոցային ցանցի արդիականացմանը, *ի թիվս այլնի,* հետեւյալի միջոցով. (i) բժշկական եւ թափոնների կառավարման սարքավորումների, կահույքի եւ պարագաների տրամադրում Վանաձորի բժշկական կենտրոնին, (ii) Արարատի մարզում Արտաշատի բժշկական կենտրոնի վերանորոգում եւ բժշկական սարքավորումների, բժշկական կահույքի եւ պարագաների տրամադրում, (iii) Սեւանի ԲԿ-ի կառուցում եւ բժշկական սարքավորումների, բժշկական կահույքի եւ պարագաների տրամադրում եւ վերջինիս միացում Սեւանի

պոլիկլինիկային, (iv) Մեղրու մարզային ԲԿ-ին բժշկական սարքավորումների, բժշկական կահույքի եւ պարագաների տրամադրում, (v) Գեղարքունիքի մարզում Մարտունու բժշկական կենտրոնի կառուցում, բժշկական սարքավորումների, բժշկական կահույքի եւ պարագաների տրամադրում, (vi) Գյումրու հիվանդանոցի եւ Նորք-Մարաշի սրտաբանական եւ կարդիո վիրաբուժության մասնագիտացված կենտրոնի համար անգիոգրաֆների ֆինանսավորում, (vii) մարզային հիվանդանոցային ցանցում բժշկական կենտրոնների եւ հիվանդանոցների կլինիկական աշխատակազմի եւ հիվանդանոցի վարչակազմի վերապատրաստում եւ (viii) Վայոց ձորի մարզում Վայոց ձորի ԲԿ-ի կառուցում, բժշկական սարքավորումների, բժշկական կահույքի եւ պարագաների տրամադրում։

բ) «Պրոֆեսոր Յոլյանի անվան արյունաբանության կենտրոնի» կողմից առաջարկվող մասնագիտացված ստացիոնար եւ ամբուլատոր արյունաբանական ծառայությունների որակի բարելավում, ի թիվս այլնի, հետեւյալի միջոցով. (i) հեմատոլոգիայի կենտրոնի վերակառուցման եւ ոսկրածուծի փոխպատվաստման կենտրոն ստեղծելու համար անհրաժեշտ նախագծերի մշակում, (ii) անհրաժեշտ շինարարական աշխատանքների իրականացում՝ կենտրոնի արդիականացման եւ վերակառուցման համար, (iii) անհրաժեշտ բժշկական սարքավորումների, կահույքի եւ գույքի տրամադրում, (iv) կլինիկական աշխատակազմի եւ հիվանդանոցի վարչակազմի համար վերապատրաստման իրականացում եւ (v) արյան հիվանդությունների բուժման նպատակով աջակցություն բուժման ստանդարտների մշակմանը եւ իրականացմանը (միջազգային ստանդարտներին համապատասխան)։

գ) Աջակցության տրամադրում ուռուցքաբանական նոր կենտրոնի ստեղծմանը, որի նպատակն է ինտեգրված օնկոլոգիական ծառայություններ մատուցել Ստացողի բնակչությանը, *ի թիվս այլնի, հետեւյալի միջոցով.* (i) օնկոլոգիական կենտրոնի նախագծման համար

տեխնիկական աջակցության տրամադրում եւ (ii) աջակցություն օնկոլոգիական կենտրոնի համար կլինիկական պրոտոկոլների եւ բուժման ստանդարտների մշակմանը։

դ) Աջակցության տրամադրում հիվանդանոցի որակը բարելավելու նպատակով, *ի թիվս այլնի, հետեւյալի միջոցով.* (i) քաղցկեղի համապարփակ ռեեստրի ստեղծում, հիվանդանոցի անձնակազմի վերապատրաստում էպիդեմիոլոգիայի եւ վիճակագրության թեմայով եւ անհրաժեշտ ՏՏ սարքավորումներ՝ օնկոլոգիական կենտրոնի վիճակագրական դեպարտամենտի համար, որին հղում է կատարվում վերոնշյալ զ կետի շրջանակներում, եւ (ii) տեխնիկական աջակցության տրամադրում ԱԱԻ-ին՝ Վարկառուի տարածքում բոլոր հիվանդանոցների համար կլինիկական ուղենիշները եւ ստանդարտները մշակելու նպատակով։

Մաս 3. Ծրագրի կառավարումը

Աջակցության տրամադրում ԱՆ-ին՝ Ծրագրի տեխնիկական եւ վարչական կառավարման նպատակով, այդ թվում՝ անհրաժեշտ Գործառնական ծախսերի եւ աուդիտի ֆինանսավորում։

Մաս 4. Անհետաձգելի արձագանք COVID-19-ին

COVID-19-ով պայմանավորված վտանգի կանխարգելում, հայտնաբերում եւ դրան արձագանքում, *ի թիվս այլնի*, դեպքի վարումը հեշտացնելու, վարակի կանխարգելման եւ վերահսկման եւ դեպքը բացահայտելու նպատակով սարքավորումների եւ նյութերի գնման միջոցով։

ԼՐԱՑՈՒՄ 2

Ծրագրի իրականացումը

Բաժին I. Իրականացման մեխանիզմները

Ա. Ինստիտուցիոնալ մեխանիզմները

1. Մինչեւ Ծրագրի ավարտը Վարկառուն գործարկում եւ պահպանում է ծրագրի իրականացման գրասենյակ՝ ԱՆ-ի ենթակայության ներքո, որը պատասխանատու է Ծրագրի ընդհանուր համակարգման համար (ԱԾԻԳ)։ Այդ գրասենյակը պետք է ունենա բավարար թվով աշխատողներից կազմված անձնակազմ՝ Բանկին բավարարող որակավորմամբ եւ փորձով, այդ թվում, *ի թիվս այլոց,* տնօրեն, մոնիթորինգի եւ գնահատման համակարգող, գնումների մասնագետներ, ֆինանսական կառավարման մասնագետ եւ Ծրագրի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ այլ աշխատակազմ, ինչպես սահմանված է Գործառնական ձեռնարկում։

2. Վարկառուն Ծրագիրն իրականացնում է հետեւյալին համապատասխան.

   ա) Բանկին բավարարող Գործառնական ձեռնարկ, որը պետք է ներառի Ծրագրի համապատասխան Մասերի իրականացման կանոնները, մեթոդները, ուղենիշները, ստանդարտ փաստաթղթերը եւ ընթացակարգերը, ներառյալ հետեւյալը. (i) Ծրագրի իրականացման միջոցառումների մանրամասն նկարագրություն եւ Ծրագրի մանրամասն ինստիտուցիոնալ մեխանիզմներ, (ii) Ծրագրի շրջանակներում մշակված կիրառելի բոլոր միջոցառումներում բժշկական թափոնների կառավարման ինտեգրված մոտեցում ներդնելու ուղենիշներ, եւ (iii) Ծրագրի վարչական, հաշվապահական հաշվառման, աուդիտի, հաշվետվությունների ներկայացման, ֆինանսական, գնումների եւ մասհանման ընթացակարգեր. եւ

   բ) ԿՀՖ ձեռնարկ։

3. Այն դեպքում, երբ Գործառնական ձեռնարկի կամ ԿՀՖ ձեռնարկի որեւէ դրույթ հակասում է սույն Համաձայնագրին, գերակայում են սույն Համաձայնագրի պայմանները, եւ եթե Վարկառուի եւ Բանկի միջեւ այլ բան գրավոր համաձայնեցված չէ, ապա Վարկառուն չպետք է չեղարկի, փոփոխի, կասեցնի, հրաժարվի կամ այլ կերպ չկիրառի Գործառնական ձեռնարկը, ԿՀՖ ձեռնարկը կամ դրանց դրույթներից որեւէ մեկը:

Բ. Երաշխիքները

1. Վարկառուն Ծրագիրն ԱՆ-ի միջոցով իրականացնում է համաձայն՝

   ա) ԲՍԿԾ-ների, եւ

   բ) ԲՍԿՇ-ների, եւ հաջորդիվ իրականացնում է ԲՍԿԾ-ները՝ վերջիններիս պայմաններին համապատասխան եւ Բանկի համար ընդունելի եղանակով՝ ապահովելով, որ շինարարական աշխատանքները Ծրագրի որեւէ մասի համար չմեկնարկեն, քանի դեռ Վարկառուն համապատասխան տեղանքի համար չի մշակել ԲՍԿԾ-ն, եւ վերջինս չի հաստատվել Բանկի կողմից:

2. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի շրջանակներում իրականացվելիք ոչ մի աշխատանք չառաջացնի վերաբնակեցման անհրաժեշտություն:

Բաժին II. <u>Ծրագրի մոնիթորինգը, հաշվետվությունների ներկայացումը եւ գնահատումը</u>

Վարկառուն Ծրագրի՝ տվյալ օրացուցային կիսամյակին վերաբերող յուրաքանչյուր հաշվետվություն Բանկին ներկայացնում է ոչ ուշ, քան յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից հետո քառասունհինգ (45) օրվա ընթացքում:

Բաժին III. Վարկային միջոցների առհանումը

Ա. Ընդհանուր

Չսահմանափակելով Ընդհանուր պայմանների II հոդվածի դրույթները եւ Մասհանման եւ ֆինանսական տեղեկությունների վերաբերյալ գրությանը համապատասխան՝ Վարկառուն կարող է Վարկային միջոցներն առհանել՝ ա) Թույլատրելի ծախսերը ֆինանսավորելու եւ բ) Միանվագ կոմիսիոն վճարը վճարելու համար՝ հատկացված գումարի չափով, եւ կիրառելի լինելու դեպքում այն տոկոսային հարաբերությամբ, որոնք հետեւյալ աղյուսակում սահմանվում են յուրաքանչյուր Կատեգորիայի համար.

Կատեգորիա	Հատկացված վարկային միջոցների գումար (արտահայտված ԱՄՆ դոլարով)	Ֆինանսավորման ենթակա ծախսերի տոկոս (ներառյալ հարկերը)
1) Ծրագրի համար ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, գործառնական ծախսեր, վերապատրաստում եւ խորհրդատվական ծառայություններ, ներառյալ՝ աուդիտը	7,381,500	80%
2) Կոմիսիոն վճար	18,500	Ընդհանուր պայմանների 2.07(բ) բաժնին համապատասխան՝ սույն Համաձայնագրի 2.03 բաժնի համաձայն վճարման ենթակա գումար
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	7,400,000	

Բ. Առհանման պայմանները, առհանման ժամանակահատվածը

1. Չնայած վերոնշյալ Մաս Ա-ի դրույթներին՝ որևէ առհանում չի իրականացվի

Ստորագրման օրվանից առաջ կատարված վճարումների համար, բացառությամբ այն առհանումների, որոնց համախառն գումարը չի գերազանցում 1,250,000 ԱՄՆ դոլար գումարը, որոնք կարող են կատարվել Կատեգորիա (1)-ի ներքո Թույլատրելի ծախսերի շրջանակներում այն վճարումների համար, որոնք կատարվել են մինչ ստորագրման ամսաթիվը՝ 2021թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո:

2. Փակման ամսաթիվը 2023 թվականի փետրվարի 28-ն է:

ԼՐԱՑՈՒՄ 3

Պարտավորության հետ կապված մարման ժամանակացույց

Հետեւյալ աղյուսակում սահմանվում են Վարկի Մայր գումարի վճարման ամսաթվերը, ինչպես նաեւ Վարկի ընդհանուր մայր գումարի տոկոսը, որը ենթակա է վճարման Մայր գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին (Մարվող գումարի մասնաբաժին)։

Մայր գումարի հավասարաչափ մարումներ

Մայր գումարի վճարման ամսաթիվ	Մարվող գումարի մասնաբաժին
Յուրաքանչյուր մայիսի 15-ին եւ նոյեմբերի 15-ին Սկսելով 2036թ. մայիսի 15-ից մինչև 2045թ. նոյեմբերի 15-ը:	4.76%
2046թ. մայիսի 15-ին	4.80%

ՀԱՎԵԼՎԱԾ

Սահմանումներ

1. Ընդհանուր պայմանների Հավելվածի 5-րդ պարբերության նպատակներով «Հակակոռուպցիոն ուղենիշներ» նշանակում է 2006 թվականի հոկտեմբերի 15-ին ընդունված եւ 2011 թվականի հունվարին վերանայված եւ 2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ գործող՝ «ՎԶՄԲ վարկերի եւ ԶՄԱ փոխառությունների եւ դրամաշնորհների միջոցով ֆինանսավորվող ծրագրերում խարդախության եւ կոռուպցիայի դեպքերը կանխելու եւ դրանց դեմ պայքարելու վերաբերյալ ուղենիշները»:

2. «Կատեգորիա» նշանակում է սույն Համաձայնագրի Լրացում 2-ի III.Ա բաժնում բերված աղյուսակում սահմանված կատեգորիա:

3. «COVID-19» նշանակում է նոր 2019 կորոնավիրուսով (SARS-CoV-2) պատճառված կորոնավիրուսային հիվանդությունը:

4. «Համապատասխան ԱԱՊ հիմնարկներ» նշանակում է ԱԱՊ ցանկացած հիմնարկ (ներառյալ՝ գյուղական ամբուլատորիաներն ու քաղաքային պոլիկլինիկաները), որը մասնակցում է Ծրագրին ԿՀՖ ձեռնարկում սահմանված ԱԱՊ կատարողականի համաձայնագրի միջոցով:

5. «Թույլատրելի սկրինինգային թեստեր» նշանակում է Համապատասխան ԱԱՊ հիմնարկում կատարված բժշկական թեստերը, ներառյալ՝ շաքարի մակարդակի չափումը, ՊԱՊ քսուկը եւ քսուկի հետազոտությունը, նախածննդյան խնամքի թեստերը, ինչպես նաեւ Վարկառուի եւ Բանկի միջեւ համաձայնեցված ցանկացած այլ թեստ, որը ԿՀՖ ձեռնարկում սահմանված միավոր արժեքի հիման վրա ենթակա է փոխհատուցման Ծրագրի շրջանակներում:

6. «Բնապահպանական եւ սոցիալական կառավարման շրջանակ» կամ «ԲՍԿՇ» նշանակում է Բանկի համար ընդունելի՝ Վարկառուի շրջանակը, որը հրապարակված է եւ հանրությանը հասանելի է 2020թ. նոյեմբերի 25-ից, որը

պարունակում է Ծրագրին առնչվող բնապահպանական եւ սոցիալական կառավարման միջոցառումներ, ներառյալ՝ (i) Ծրագրի գործողությունների իրականացման արդյունքում առաջացող բնապահպանական եւ սոցիալական ռիսկերի եւ ուղղակի ու անուղղակի դրական եւ բացասական բնապահպանական հնարավոր ազդեցությունների բացահայտման համար ուղենիշները, (ii) բնապահպանական եւ սոցիալական գնահատումներ կատարելու եւ կիրառելի լինելու դեպքում՝ բնապահպանական եւ սոցիալական կառավարման պլանները, ներառյալ՝ նաեւ Վարակի վերահսկման եւ թափոնների կառավարման պլաններ մշակելու համար ուղենիշները, (iii) տեղեկատվության բացահայտման, շահագրգիռ կողմերի ներգրավման, աշխատանքային պայմանների, մասնագիտական առողջության եւ անվտանգության, ինչպես նաեւ բողոքարկման մեխանիզմների վերաբերյալ դրույթները, (iv) բժշկական թափոնների հեռացման պրոտոկոլները, (v) ակնկալվող բացասական ազդեցությունների համար մեղմացնող միջոցների ընդհանրական համախումբը եւ դրանց կիրառման մոնիթորինգի համար մեթոդաբանությունը, եւ (vi) բացահայտված դրական ազդեցություններն ընդլայնելու նպատակով միջոցառումները։

7. «Բնապահպանական եւ սոցիալական կառավարման ծրագիր» կամ «ԲՍԿԾ» նշանակում է Վարկառուի կողմից մշակված՝ տեղանքին բնորոշ փաստաթուղթ, համապատասխան դեպքերում՝ Բանկի համար բավարարող ձեւով, որը պետք է հրապարակվի Վարկառուի եւ Բանկի կողմից՝ մանրամասնելով՝ ա) Ծրագրի իրականացման եւ գործարկման ընթացքում ձեռնարկման ենթակա միջոցները՝ բացասական բնապահպանական եւ սոցիալական ազդեցություններից խուսափելու, դրանք նվազագույնին հասցնելու եւ մեղմելու համար կամ ընդունելի մակարդակի հասցնելու համար դրանք նվազեցնելու նպատակով, բ) Ծրագրի շահառու հանդիսացող բժշկական հաստատության՝ Վարակի վերահսկման եւ թափոնների կառավարման պլանը՝ համապատասխան դեպքերում նախատեսելով վարակի ներքին տարածումը կանխարգելելու միջոցառումներ եւ

առողջապահական հիմնարկների շահագործման ընթացքում բժշկական թափոնների անվտանգ հեռացման համար միջոցառումներ, եւ գ) այն գործողություններն ու կարողությունները, որոնք անհրաժեշտ են կանխարգելման, նվազեցման եւ մեղմացման միջոցառումներն իրականացնելու համար, ինչպես տվյալ փաստաթուղթը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ։

8. «Ընդհանուր պայմաններ» նշանակում է 2018 թվականի դեկտեմբերի 14-ով թվագրված (2020 թվականի օգոստոսի 1-ին վերանայված)՝ «ՎԶՄԲ ֆինանսավորման, ներդրումային ծրագրի ֆինանսավորման մասով Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի ընդհանուր պայմանները»։

9. «ԱԾԻԳ» նշանակում է Առողջապահության նախարարի 1996 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 764 հրամանով ստեղծված՝ Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակը կամ դրա ցանկացած իրավահաջորդ, որին հղում է կատարվում սույն Համաձայնագրի Լրացում 2-ի Ի.Ա.1 բաժնում։

10. «Վարակի վերահսկման եւ թափոնների կառավարման ծրագիր» կամ «ՎՎԹԿԾ» նշանակում է տեղանքին բնորոշ համապատասխան ԲՍԿԾ-ում ներառված՝ Ծրագրի շահառու բուժհաստատության ծրագիր, որով նախատեսվում են վարակի վերահսկման եւ բժշկական թափոնների կառավարման այն գործելակերպերը, որոնց պետք է հետեւել այս հաստատության գործունեության ընթացքում՝ նպատակ ունենալով կանխարգելել COVID-19-ի ներքին տարածումը։

11. «*Մարզ*» նշանակում է Վարկառուի վարչատարածքային բաժանման միավոր կամ շրջան, իսկ «*մարզեր*» նշանակում է այդ վարչատարածքային բաժանման միավորների ամբողջությունը։

12. «ՄՄԱ» նշանակում է մոր եւ մանկան առողջություն։

13. «ԱՆ» նշանակում է Վարկառուի Առողջապահության նախարարությունը կամ

դրա ցանկացած իրավահաջորդ։

14. «ՈՎՀ» նշանակում է ոչ վարակիչ հիվանդություններ, որոնք վարակիչ չեն, սակայն փոխկապակցված են որոշակի ռիսկային գործոնների, օրինակ՝ անձի ապրելակերպի, գենետիկայի կամ շրջակա միջավայրի հետ, որոնցից յուրաքանչյուրը մեծացնում է նմանատիպ հիվանդությունների հավանականությունը։

15. «ԱԱԻ» նշանակում է Վարկառուի Առողջապահության ազգային ինստիտուտը կամ դրա ցանկացած իրավահաջորդ։

16. «Գործառնական ծախսեր» նշանակում է Ծրագրի իրականացման, կառավարման, մոնիթորինգի եւ գնահատման նպատակներով ԱՆ-ի եւ ՊԱԳ-ի կողմից կատարված ողջամիտ եւ անհրաժեշտ ծախսերը, որոնք հաստատվել են Բանկի կողմից՝ ըստ Բանկի համար ընդունելի բյուջեների, եւ ընդգրկում են գրասենյակի վարձակալության, գրասենյակային սարքավորումների եւ պիտույքների, գրասենյակային սարքավորումների պահպանման եւ վերանորոգման, մեքենաների շահագործման (ներառյալ՝ վառելիքի ծախսերը) ու վերանորոգման, ճանապարհածախսի, կապի, գրավոր եւ բանավոր թարգմանության ծախսերը, բանկային ծառայությունների, հիվանդանոցների ստուգման, փոխադարձ հավաստիացման ծախսերը, ԱԾԻԳ-ի աշխատակազմի աշխատավարձը եւ բժշկական ապահովագրությունը եւ Բանկի հետ համաձայնեցված զանազան այլ ծախսեր, որոնք կարող են համաձայնեցվել Բանկի հետ, սակայն որոնք չեն ընդգրկում ԱՆ-ի եւ ՊԱԳ-ի պաշտոնատար անձանց եւ աշխատողների աշխատավարձերը։

17. «Գործառնական ձեռնարկ» նշանակում է 2013 թվականի մարտով թվագրված և 2020թ. ապրիլին փոփոխված ձեռնարկը, որին հղում է կատարվում սույն Համաձայնագրի Լրացում 2-ի I.Ա բաժնում, որը Վարկառուն պետք է թարմացնի եւ Բանկի հետ համաձայնեցնի ոչ ուշ, քան սույն Համաձայնագրի ամսաթվից հետո 30, որը կարող է ժամանակ առ ժամանակ Բանկի համաձայնությամբ փոփոխվել։

18. «ԿՀՖ ձեռնարկ» նշանակում է 2013 թվականի փետրվարի 12-ով թվագրված՝ կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման ձեռնարկը, որը ներառում է Ծրագրի Մաս 1(ա)-ի շրջանակներում Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման սխեմայի իրականացման կանոնները, մեթոդները, ուղենիշները եւ ընթացակարգերը, որը կարող է ժամանակ առ ժամանակ Բանկի համաձայնությամբ փոփոխվել։

19. «Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման սխեմա» նշանակում է ԱՆ 2011 թվականի մայիսի 10-ի թիվ 859-Ա հրամանով ստեղծված Համապատասխան ԱԱՊ հիմնարկներին կատարողականի գնահատման հիման վրա փոխհատուցելու համար Վարկառուի ծրագիրը, որն ընդգրկում է ա) Համապատասխան ԱԱՊ հիմնարկների կողմից իրականացված Թույլատրելի սկրինինգային թեստերի դիմաց փոխհատուցումը, եւ (բ) Կատարողականի վրա հիմնված խրախուսման միջոցների ապահովումը Համապատասխան ԱԱՊ հիմնարկներին՝ դրանց կատարողականի մակարդակի դիմաց։

20. «Կատարողականի վրա հիմնված խրախուսման միջոցներ» նշանակում է ԱԱՊ կատարողականի համապատասխան համաձայնագրում եւ ԿՀՖ ձեռնարկում սահմանված կատարողականի ցուցանիշների կատարման մակարդակից ելնելով՝ Վարկառուի կողմից Համապատասխան ԱԱՊ հիմնարկին ՊԱԳ-ի միջոցով կատարված վճարները՝ ապրանքների, աշխատանքների, աշխատավարձային խրախուսման միջոցների եւ ծառայությունների հետ կապված ողջամիտ ծախսերի դիմաց։

21. «ԱԱՊ» նշանակում է առողջության առաջնային պահպանում՝ որպես կենսական առողջապահություն, որը հիմնված է գործնական, գիտականորեն հիմնավոր ու սոցիալապես ընդունելի մեթոդների եւ տեխնոլոգիայի վրա, ինչպես նաեւ համընդհանուր հասանելի է համայնքի անհատներին եւ ընտանիքներին՝ վերջիններիս լիարժեք մասնակցության միջոցով եւ ընդունելի գնով։

22. «ԱԱՊ կատարողականի համաձայնագրերը» վերաբերում է ԱՆ-ի, ՊԱԳ-ի եւ Համապատասխան ԱԱՊ հիմնարկների միջեւ պայմանագրային համաձայնությանը, որով սահմանվում են կատարողականի ցուցանիշները, ձեռքբերումների թիրախային մակարդակները, սահմանումները, հաշվարկման բանաձեւերը եւ տեղեկատվության աղբյուրները։

23. Ընդհանուր պայմանների Հավելվածի 85-րդ պարբերության նպատակներով «Գնումների կանոնակարգեր» նշանակում է «ՆԾՖ վարկառուների համար Համաշխարհային բանկի գնումների կանոնակարգեր»՝ թվագրված 2016 թվականի հուլիսով եւ վերանայված 2017 թվականի նոյեմբերին եւ 2018 թվականի օգոստոսին։

24. «Վերաբնակեցում» նշանակում է Ծրագրի շրջանակներում հողերի պարտադրված զավթման ազդեցությունը, որի հետեւանքով (i) բացասական ազդեցության է ենթարկվում նման զավթման ազդեցությունը կրող անձանց կենսամակարդակը, կամ (ii) ժամանակավոր կամ մշտական բացասական ազդեցության են ենթարկվում նման անձանց կողմից ձեռք բերված կամ նրանց պատկանող տան, հողի (ներառյալ՝ տնամերձ, գյուղատնտեսական հողեր կամ արոտավայրեր) կամ այլ շարժական կամ անշարժ գույքի հանդեպ իրավունքը, սեփականության իրավունքը կամ շահերը, կամ (iii) ժամանակավոր կամ մշտական բացասական ազդեցության է ենթարկվում արտադրական ակտիվների մատչելիությունը, կամ (iv) ժամանակավոր կամ մշտական բացասական ազդեցության է ենթարկվում բիզնեսը, մասնագիտական գործունեությունը, աշխատանքը եւ բնակության վայրը կամ բնական միջավայրը։

25. «Աշխատավարձային խրախուսման միջոցներ» նշանակում է լրացուցիչ աշխատավարձ, որը, ԱՆ 2011 թվականի մայիսի 10-ի թիվ 859-Ա հրամանի համաձայն, վճարվում է ԱԱՊ բուժանձնակազմին (բժիշկներ, բուժքույրեր եւ Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման սխեմային օժանդակող վարչական աշխատակազմ)՝ ԿՀՖ ձեռնարկում սահմանված կատարողականի ցուցանիշների կատարման մակարդակի հիման վրա նրանց գործունեությունը

վարձատրելու համար (հետեւաբար նշված ծախսերը կազմում են Ընդհանուր պայմաններում սահմանված Թույլատրելի ծախսերի ենթաբաժին)։

26. «ՊԱԳ» նշանակում է Վարկառուի պետական առողջապահական գործակալությունը, որը ստեղծվել եւ գործում է Վարկառուի 1997 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 593 որոշման համաձայն, կամ դրա ցանկացած իրավահաջորդ։

27. «Ստորագրման ամսաթիվ» նշանակում է այն երկու ամսաթվերից վերջինը, երբ Վարկառուն եւ Բանկը ստորագրել են սույն Համաձայնագիրը, եւ այդպիսի սահմանումը տարածվում է Ընդհանուր պայմաններում «Վարկային համաձայնագրի ամսաթվին» կատարվող բոլոր հղումների վրա։

28. «Վերապատրաստում» նշանակում է Ծրագրի շրջանակներում իրականացվելիք վերապատրաստման միջոցառումներ (խորհրդատվական ծառայություններից տարբեր), այդ թվում՝ վերապատրաստման աշխատաժողովների եւ ուսումնական այցերի մասնակիցների կատարած ողջամիտ եւ անհրաժեշտ ճանապարհածախսը, ինչպես նաեւ Բանկի հետ համաձայնեցված՝ վերապատրաստման աշխատաժողովներին եւ ուսումնական այցերին ուղղակիորեն առնչվող այլ ծախսեր։

Փետրվարի 18, 2021թ.

Նորին գերազանցություն
Պրն Ատոմ Ջանջուղազյանին
Ֆինանսների նախարար
Ֆինանսների նախարարություն
Մելիք-Ադամյան 1 փողոց
Երեւան
ՀՀ

Թեմա՝ ՎԶՄԲ վարկ No. 9202-AM եւ ՄԶԸ վարկ No. 5222-AM

«Հիվանդությունների կանխարգելման եւ վերահսկման ծրագիր»
Լրացուցիչ ցուցումներ. Մասհանումների եւ ֆինանսական
տեղեկությունների վերաբերյալ գրություն (ՄՖՏԳ)

Մեծարգո պարոն նախարար,

Հղում եմ կատարում 2013 թվականի մայիսի 17-ի No. 5222-AM փոխառության Ֆինանսավորման համաձայնագրին եւ No. 9202-AM վարկի Լրացուցիչ ֆինանսավորման վարկային համաձայնագրին (միասին՝ Համաձայնագրեր), որոնք երկուսն էլ ստորագրվել են Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի եւ Միջազգային զարգացման ընկերակցության (միասին՝ Համաշխարհային բանկ կամ Բանկ) եւ Հայաստանի Հանրապետության (Վարկառու) միջեւ վերոնշյալ ծրագրի համար: Համաձայնագրերում սահմանված Ընդհանուր պայմանները նախատեսում են, որ Վարկառուն կարող է ժամանակ առ ժամանակ խնդրել Վարկային և Փոխառության հաշվից առհանել վարկային միջոցներ՝ Մասհանումների եւ ֆինանսական տեղեկությունների վերաբերյալ գրությանը համապատասխան, ինչպես նաեւ լրացուցիչ այնպիսի ցուցումների համաձայն, որոնք Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ սահմանել՝ Վարկառուին ծանուցելով: Այս ՄՖՏԳ-ն փոխարինում է Մասհանումների սկզբնական գրությանը՝ թվագրված 2013 թվականի մայիսի 17-ով: Ընդհանուր պայմաններով նաեւ

նախատեսվում է, որ Մասհանումների եւ ֆինանսական տեղեկությունների վերաբերյալ գրությամբ կարող են սահմանվել Ծրագրին բնորոշ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման մասով պահանջները:

I. Մասհանման մեխանիզմները, առհանումը եւ վարկային միջոցների մասով հաշվետվությունների ներկայացումը

Ներդրումային ծրագրի ֆինանսավորման համար մասհանման ուղենիշները՝ թվագրված 2017 թվականի փետրվարով (Մասհանման ուղենիշներ), հասանելի են Բանկի հանրային կայքում՝ https://www.worldbank.org եւ վերջինիս անվտանգ կայքում՝ «Client Connection»՝ https://clientconnection.worldbank.org հղումով: Մասհանման ուղենիշներն այս ՄՖՏԳ-ի անբաժան մասն են կազմում, իսկ այն, թե ինչպես են Մասհանման ուղենիշների դրույթները կիրառվում այս Վարկի նկատմամբ, ներկայացվում է ստորեւ:

i) Մասհանման մեխանիզմները

- ***Ընդհանուր դրույթներ*** (Լրացում 1): Լրացում 1-ի աղյուսակը սահմանում է մասհանման մեթոդները, որոնք Վարկառուն կարող է կիրառել, լիազորված ստորագրությունների գրանցման մասին տեղեկությունները, առհանման հայտերի մշակումը (այդ թվում նաեւ հայտերի նվազագույն արժեքը եւ կանխավճարների մշակումը), օժանդակ փաստաթղթերի մասով ցուցումները եւ Հատուկ հաշվի մասով հաշվետվությունների ներկայացման հաճախականությունը:

ii) **Էլեկտրոնային եղանակով ներկայացում:** Հղում կատարել Ընդհանուր պայմանների 10.01 (գ) բաժնին:

Բանկը Վարկառուին կարող է թույլ տալ հայտերը (օժանդակ փաստաթղթերով) ներկայացնել էլեկտրոնային եղանակով Բանկի՝ կայքի վրա հիմնված պորտալի՝ (https://clientconnection.worldbank.org) «Client Connection»-ի միջոցով: Այս տարբերակը կարող է գործել, եթե Վարկառուի կողմից գրավոր նշանակված այն պաշտոնատար անձինք, որոնք լիազորված են ստորագրել եւ

ներկայացնել Հայտերը, «Client Connection» համակարգում գրանցված են որպես օգտատերեր: Նշանակված պաշտոնատար անձինք կարող են Հայտերը էլեկտրոնային եղանակով ներկայացնել՝ լրացնելով Ձեւ 2380-ը, որը հասանելի է «Client Connection» համակարգի միջոցով: Լիազորված ստորագրողի գրությունը ստորագրելով՝ Վարկառուն հաստատում է, որ վերջինս այդ անձանց լիազորում է ընդունել Նույնականացման անվտանգ հավաստագրերը (ՆԱՀ) (Secure Identification Credentials (SIDC)) եւ էլեկտրոնային եղանակով Բանկին ներկայացնել Հայտերն ու օժանդակ փաստաթղթերը: Բանկն իրավունք ունի եւ կարող է իր սեփական հայեցողությամբ ժամանակավորապես կամ մշտապես արգելել Վարկառուի կողմից Հայտերի ներկայացումն էլեկտրոնային եղանակով: ՆԱՀ-ը կիրառելու համար պաշտոնատար անձանց նշանակելով եւ ընտրելով էլեկտրոնային եղանակով Հայտերի ներկայացումը՝ լիազորված ստորագրողի գրության միջոցով Վարկառուն իր համաձայնությունն է հավաստում՝ ա) հետեւելու Նույնականացման անվտանգ հավաստագրերի օգտագործման պայմաններին՝ Հայտերը եւ օժանդակ փաստաթղթերը մշակելու համար էլեկտրոնային եղանակից օգտվելու առնչությամբ, որոնք հասանելի են Բանկի հանրային կայքում՝ https://worldbank.org եւ «Client Connection»-ում, եւ բ) ապահովել, որ այդ պաշտոնատար անձը հետեւի այդ պայմաններին:

II. Ֆինանսական հաշվետվություններն ու աուդիտը

i) Ֆինանսական հաշվետվություններ: Վարկառուն նախապատրաստում եւ ոչ ուշ, քան յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից քառասունհինգ (45) օր հետո Բանկին բավարարող ձեւով եւ բովանդակությամբ Բանկին է ներկայացնում աուդիտ չանցած, միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ (ՄՖՀ) Ծրագրի համար, որոնք վերաբերում են այդ կիսամյակին:

ii) Աուդիտ: Վարկառուն Ծրագրի ֆինանսական հաշվետվություններն աուդիտի է ենթարկում՝ Ընդհանուր պայմանների 5.09(բ) բաժնի դրույթներին

համապատասխան: Յուրաքանչյուր աուդիտ ընդգրկում է Վարկառուի մեկ ֆիսկալ տարվա ժամանակահատվածը: Նման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար Ծրագրի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները ա) ոչ ուշ, քան այդ ժամանակահատվածի ավարտից վեց (6) ամիս հետո ներկայացվում են Բանկին եւ բ) ժամանակին եւ Բանկի համար ընդունելի ձեւով հանրորեն հասանելի են դարձվում:

III. Այլ տեղեկություններ

Մասհանման մեխանիզմների մասին լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք հղում կատարել Վարկային ձեռնարկին, որը հասանելի է Բանկի հանրային կայքում եւ «Client Connection» համակարգում: Բանկն առաջարկում է, որ դուք որպես օգտատեր գրանցվեք «Client Connection» համակարգում: Այս կայքի միջոցով դուք կկարողանաք նախապատրաստել եւ ներկայացնել Հայտերը, մոնիթորինգի ենթարկել իրական ռեժիմին մոտ Վարկի կարգավիճակը եւ ստանալ քաղաքականության, ֆինանսական եւ գնումների մասին տեղեկությունները: Կայքի եւ գրանցման մեխանիզմների մասին լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կապ հաստատել Բանկի հետ՝ askloans@worldbank.org էլեկտրոնային հասցեով:

Հարգանքով՝

_____

Սիլվի Բոսութղո

Հայաստանի համար պատասխանատու ղեկավար

Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջան

<u>Հավելվածներ</u>

1. Լիազորված ստորագրողի գրության ձեւ (Հավելված 1),
2. Ծախսերի մասին քաղվածքի ձեւ (ԾՔ) (Հավելված 2),
3. Թույլատրելի ծախսերի մասով հաշվետու ժամանակահատվածում Կատարողականի վրա հիմնված խրախուսման միջոցների սխեմայի համար Կատեգորիա 2-ի շրջանակներում վճարումների ձեւ (Հավելված 3):

Պատճենը՝ Պրն Արսեն Թորոսյանին
Առողջապահության նախարար
Առողջապահության նախարարություն
Երեւան, ՀՀ

Պրն Երվանդ Էլիբեկյան
Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրեն
Առողջապահության նախարարություն
Երեւան, ՀՀ

Լրացում 1: Մասհանման մեխանիզմները

Հիմնական տեղեկություններ					
Վարկի No.	**ՎԶՄԲ 9202 - ԱՄ** **ՄԶԸ 5222 - ԱՄ**	**Երկիր**	Հայաստանի Հանրապետություն	**Փակման ամսաթիվ**	Վարկային համաձայնագրի Լրացում 2-ի III.Բ.2 բաժին
		Վարկառու	Հայաստանի Հանրապետություն		
		Ծրագրի անվանում	«Հիվանդությունների կանխարգելման եւ վերահսկման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» եւ «Հիվանդությունների կանխարգելման եւ վերահսկման ծրագիր»	**Մասհանման վերջնաժամկետի ամսաթիվ** ***(ենթաբաժին 3.7 **)***	Փակման ամսաթվից չորս ամիս հետո

Մասհանման մեթոդներ եւ օժանդակ փաստաթղթեր		
Մասհանման մեթոդներ ***(բաժին 2 **)***	**Մեթոդներ**	**Օժանդակ փաստաթղթեր** ***(ենթաբաժիններ 4.3 եւ 4.4 **)***
Ուղիղ վճարում	Այո	Գրանցումների պատճենը (օրինակ՝ մատակարարների հաշիվ-ապրանքագրերը, կանխավճարի երաշխիքները եւ պահումները եւ այլն)
Փոխհատուցում	Այո	Ծախսերի մասին քաղվածք (ԾՔ), ՄՖՏԳ-ի Հավելված 2-ում նախատեսված ձեւաչափով
Հատուկ հաշիվ	Այո	Ծախսերի մասին քաղվածք (ԾՔ), ՄՖՏԳ-ի Հավելված 2-ում նախատեսված ձեւաչափով
Հատուկ պարտավորություններ	Այո	Գրանցումների պատճենը (օրինակ՝ մատակարարների հաշիվ-ապրանքագրերը, կանխավճարի երաշխիքները եւ պահումները եւ այլն)

Հատուկ հաշիվներ *(բաժիններ 5 եւ 6 **)*			
Տեսակ	Համակցված՝ թե՛ սկզբնական եւ թե՛ ԼՖ վարկերի համար, որոնք կառավարվում են ԱԾԻԳ-ի կողմից	**Առավելագույն չեմ**	Ֆիքսված
Ֆինանսական հաստատություն - անվանում	ՀՀ կենտրոնական բանկում Ֆինանսների նախարարության Միասնական գանձապետական հաշիվ	**Արժույթ**	ԱՄՆ դոլար
Հաշվետվությունների ներկայացման հաճախականություն *(ենթաբաժին 6.3 **)*	Եռամսյակային	**Գումար**	**2,500,000**

Հայտերի նվազագույն արժեք *(ենթաբաժին 3.5)*
Փոխհատուցման, Ուղիղ վճարման եւ Հատուկ պարտավորության նվազագույն արժեքը կազմում է 200,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար:

Լիազորված ստորագրություններ (*ենթաբաժիններ 3.1 եւ 3.2 *) . *Լիազորված ստորագրողների գրության ձեւը տրամադրվում է այս գրության Հավելված 1-ում:*** **Առհանման եւ փաստաթղթերի վերաբերյալ հայտեր *(ենթաբաժին 3.3 եւ 3.4 **)***
Համաշխարհային բանկ Radnicka cesta 80, 9-րդ հարկ Զագրեբ, HR-10000 Խորվաթիա Ուղղված՝ Վարկային դեպարտամենտին (WFACS)

Լրացուցիչ ցուցումներ
Միջոցները կմիավորվեն ՄԶԸ 5222 - ԱՄ եւ ՎԶՄԲ 9202 - ԱՄ-ի համար: ՄԶԸ 5222 - ԱՄ-ի միջոցները պետք է օգտագործվեն սկզբում, իսկ դրանք սպառվելուց հետո կօգտագործվեն ՎԶՄԲ ԼՖ միջոցները:

Այլ

*** Բաժինները եւ ենթաբաժինները վերաբերում են «Ներդրումային ծրագրի ֆինանսավորման համար մասհանման ուղենիշներին»՝ թվագրված 2017 թվականի փետրվարով:*

[Հավելված 1. Լիազորված ստորագրողի գրության ձեւ]

[Գլխագիր]
Ֆինանսների նախարարություն
[Փողոցի անվանում]
[քաղաք] [երկիր]

[*ԱՄՍԱԹԻՎ*]

Համաշխարհային բանկ
1818 H Street, N.W.
Վաշինգտոն D.C. 20433
ԱՄՆ

Ուղղված՝ *Երկրի համար պատասխանատու ղեկավարին*

Թեմա՝ ՎԶՄԲ վարկ No. 9202-AM եւ ՄԶԸ փոխառություն No. 5222 - AM

«Հիվանդությունների կանխարգելման եւ վերահսկման ծրագիր»

Լրացուցիչ ցուցումներ. Մասհանումների եւ ֆինանսական տեղեկությունների վերաբերյալ գրություն (ՄՖՏԳ)

Հղում եմ կատարում 2013 թվականի մայիսի 17-ի No. 5222-AM փոխառության Ֆինանսավորման համաձայնագրին եւ No. 9202-AM վարկի Լրացուցիչ ֆինանսավորման վարկային համաձայնագրին (միասին՝ Համաձայնագրեր), որոնք երկուսն էլ ստորագրվել են Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի եւ Միջազգային զարգացման ընկերակցության (միասին՝ Համաշխարհային բանկ կամ Բանկ) եւ Հայաստանի Հանրապետության (Վարկառու) միջեւ վերոնշյալ ծրագրի համար: Ընդհանուր պայմանները, ինչպես սահմանվում են Վարկային համաձայնագրերում, նախատեսում են, որ Վարկառուն կարող է ժամանակ առ ժամանակ խնդրել Վարկային և Փոխառության հաշվից առհանել Վարկային և Փոխառության գումարները՝ Մասհանումների եւ ֆինանսական տեղեկությունների

վերաբերյալ գրությանը համապատասխան, ինչպես նաեւ այնպիսի լրացուցիչ ցուցումների համաձայն, որոնք Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ սահմանել՝ ծանուցելով Վարկառուին: Ընդհանուր պայմանների 2.03 բաժնի նպատակներով, ինչպես սահմանվում է Համաձայնագրում, այն անձանցից ցանկացած[1] [մեկը], որոնց ստորագրությունների վավերացված նմուշը ներկայացվում է ստորեւ, Վարկառուի անունից լիազորված է ստորագրել առհանման Հայտեր, ինչպես նաեւ Վարկի կամ Փոխառության շրջանակներում Հատուկ պարտավորության հայտեր:

Բանկին Հայտեր ներկայացնելու համար, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով, այն անձանցից [2][յուրաքանչյուրը], որոնց ստորագրությունների վավերացված նմուշը ներկայացվում է ստորեւ, լիազորված է Վարկառուի անունից, գործելով [3][առանձին] [4][համատեղ]՝ ներկայացնելու Հայտեր, ինչպես նաեւ դրանք հիմնավորող ապացույցներ՝ Բանկի կողմից նշված պայմաններով:

Սա հաստատում է, որ Վարկառուն լիազորում է այդ անձանց ընդունել Նույնականացման անվտանգ հավաստագրերը (ՆԱՀ) եւ Հայտերն ու օժանդակ փաստաթղթերը Բանկին ներկայացնել էլեկտրոնային եղանակով: Լիովին ընդունելով, որ Բանկը հիմնվելու է այդպիսի ներկայացուցչությունների եւ երաշխիքների վրա, ներառյալ՝ առանց սահմանափակումների՝ Հայտերի եւ օժանդակ փաստաթղթերի մշակման համար էլեկտրոնային միջոցների օգտագործման առնչությամբ Նույնականացման անվտանգ հավաստագրերի

---

[1] Ցուցումներ Վարկառուին: Նշե՛ք, եթե մեկից ավելի անձ պետք է Հայտեր ստորագրի, եթե այո՛, ապա նշե՛ք նրանց թիվը, եւ պաշտոնները, եւ արդյոք որեւէ շեմ է կիրառվում: *Կխնդրեինք ջնջել այս ծանոթագրությունը Բանկին ուղարկվող գրության վերջնական տարբերակում:*

[2] Ցուցումներ Վարկառուին: Նշե՛ք՝ արդյոք մեկից ավելի անձ պետք է *համատեղ* ստորագրի Հայտերը, եթե այո՛, ապա նշե՛ք փաստացի թիվը: *Կխնդրեինք ջնջել այս ծանոթագրությունը Բանկին ուղարկվող գրության վերջնական տարբերակում:*

[3] Ցուցումներ Վարկառուին: Օգտագործել այս փակագիծը, եթե լիազորված անձանցից ցանկացածը կարող է ստորագրել. եթե սա կիրառելի չէ, ապա խնդրում ենք ջնջել: *Կխնդրեինք ջնջել այս ծանոթագրությունը Բանկին ուղարկվող գրության վերջնական տարբերակում:*

[4] Ցուցումներ Վարկառուին: Այս փակագիծն օգտագործեք միայն եթե մի քանի անհատներ պետք է համատեղ ստորագրեն Հայտերից յուրաքանչյուրը. եթե սա կիառելի չէ, ապա խնդրում ենք ջնջել: *Կխնդրեինք ջնջել այս ծանոթագրությունը Բանկին ուղարկվող գրության վերջնական տարբերակում:*

օգտագործման պայմանները (ՆԱՀ-ի օգտագործման պայմաններ), Վարկառուն ներկայացնում եւ Բանկին երաշխավորում է, որ կապահովի, որ այդ անձինք պահպանեն այդ պայմանները:

Այս Լիազորությունը փոխարինում եւ չեղարկում է ցանկացած Լիազորություն, որը ներկայումս առկա է Բանկում այս Համաձայնագրի առնչությամբ:

[Անուն], [պաշտոն] Ստորագրության նմուշ՝ _____

[Անուն], [պաշտոն] Ստորագրության նմուշ՝ _____

[Անուն], [պաշտոն] Ստորագրության նմուշ՝ _____

Հարգանքով՝

/ ստորագրված /

_____

[Պաշտոն]

Հավելված 2. Ծախսերի մասին քաղվածքի ձեւ

Ծախսերի մասին քաղվածք (ԾՔ)

_____-ից _____ ժամանակահատվածում կատարված վճարումներ

Վարկի No. _____
Հայտի No. _____
Կատեգորիայի No. _____
ԾՔ-ի No. _____

Հետեւյալ ծախսերն առաջացել են ռետրոակտիվ ֆինանսավորման ժամանակաշրջանում (խնդրում եմ նշել)	Այո	Ոչ
Հետեւյալ ծախսերն առաջացել են վարկի փակման ամսաթվից առաջ (խնդրում եմ նշել)	Այո	Ոչ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
Մատակարարի անուն	ՀԲ պայմանագրի համարը Client Connection համակարգում (նախնական ուսումնասիրման ենթակա պայմանագրերի համար)	Ապրանքների կամ ծառայությունների տեսակ (CW/GO/CS/OP/TR) / հակիրճ նկարագրություն	Արժույթ եւ ընդհանուր գումար եւ պայմանագրի ամսաթիվ	Հայտով ներկայացվող հաշիվ-ապրանքագրի արժույթ եւ ընդհանուր գումար	ՎԶՄԲ/ ՄԶԸ/ԹՀ կողմից ֆինանսավորման %	Ֆինանսավորման համար թույլատրելի գումար (5 x 6)	Հատուկ հաշվից վճարված արժույթ եւ գումար (կիրառելի լինելու դեպքում)	Փոխարժեք	Վճարման ամսաթիվ	Դիտարկումներ
					ԸՆԴՀԱՆՈՒՐ					

Այս ԾՔ-ի համար օժանդակ փաստաթղթերը պահվում են _____
(վայր)

Հավելված 3

Թույլատրելի ծախսերի մասով հաշվետու ժամանակահատվածում Կատարողականի վրա հիմնված խրախուսման միջոցների սխեմայի համար Կատեգորիա 2-ի շրջանակներում վճարումները

Վճարման ամսաթիվը	ԱԱՊ հիմնարկի անվանումը	Պայմանագրի համարը	Վճարման գումարը

ՄԻԱՅՆ ՆԵՐՔԻՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Պատրաստել է՝ Դամիր Լելջակ, Ֆինանսական վերլուծաբան

Համաձայնեցվել է եւ պատճենը ուղարկվել՝

Լուիս Մ. Շվարց, Ֆինանսական ավագ մասնագետ, WFACS

Կատարինա Իսաբելա Պորտելո, Գլխավոր խորհրդատու, LEGLE

Ադաննա Չուկվումա, Առողջապահության մասնագետ, HECHN

Պատճենը՝

Պրն Սեբաստիան Ա. Մոլինեուսին՝ Հարավային Կովկասի տարածաշրջանային տնօրեն, ՀԲ

Տկն Սիլվի Բոսութղոյին՝ ՀԲ երեւանյան գրասենյակի ղեկավար

Պրն Կոեն Դեյվիդսին՝ ՀՀ-ի համար գործադիր տնօրեն, ՀԲ

Տկն Նինա Վուջոսեւիչին՝ ՀՀ-ի համար գործադիր տնօրենի խորհրդատու, ՀԲ

Մարտի 3, 2021

Պրն Ատոմ Զանջուղազյանին
Ֆինանսների նախարար
Ֆինանսների նախարարություն
Մելիք-Ադամյան փող 1
Երևան
Հայաստանի Հանրապետություն

Հայաստանի Հանրապետություն Վարկ թիվ 9202-AM
(«Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի Լրացուցիչ ֆինանսավորում)
Վրիպակի ուղղում Վարկային համաձայնագրի Ցանկ 3-ում (Մարման ժամանակացույց)

Հարգելի գերազանցություն,

Վկայակոչում ենք Հայաստանի Հանրապետության («Վարկառու») և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի («Բանկ») միջև 2021 թ փետրվարի 18-ի Վարկային համաձայնագիրը («Վարկային համաձայնագիր»)՝ վերոնշյալ Ծրագրի համար: Եթե համատեքստն այլ բան չի պահանջում, մեծատառերով նշված հասկացություններն ունեն Ընդհանուր պայմաններում կամ Վարկային համաձայնագրում դրանց վերագրված իմաստը:

Ըստ մեր վերջին քննարկումների և պայմանավորվածությունների՝ սույնով ներառում ենք այս Վարկի մարման ճիշտ ժամանակացույցը, որում արտացոլված է ձևակերպված Վարկային համաձայնագրում ներառված՝ Մայր գումարի ամսաթվերի ուղղումը:

Հետևաբար, Վարկային համաձայնագրի Ցանկ 3-ը լրացվում և ամբողջությամբ փոխարինվում է հետևյալ բովանդակությամբ

ՑԱՆԿ 3

Պարտավորությանը կապված մարման ժամանակացույց

Հետևյալ աղյուսակով սահմանվում են Վարկի Մայր գումարի վճարման ամսաթվերը և Վարկի ընդհանուր մայր գումարի տոկոսը, որը ենթակա է վճարման Մայր գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին («Մասնավճարի բաժին»):

Մայր գումարի հավասարաչափ մարումներ

Մայր գումարի վճարման ամսաթիվ	**Մասնավճարի բաժին**
Յուրաքանչյուր մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին Սկսած 2035 թ նոյեմբերի 15-ից մինչև 2045 թ մայիսի 15-ը	4.76%
2045 թ նոյեմբերի 15-ին	4.80%

2. Վարկային համաձայնագրի բոլոր մյուս հասկացությունները նույն են մնում:

Խնդրում ենք Վարկառուի անունից վերոնշյալի հետ Ձեր համաձայնությունը հաստատել՝ սույն Նամակի բնօրինակներից մեկը ստորագրելով, թվագրելով և մեզ վերադարձնելով :

Հարգանքներով՝

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿ

Սիլվի Կ Բոսութղո
Հայաստանի գրասենյակի ղեկավար
Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

_____
Լիազոր ներկայացուցիչ կողմից

Անուն, ազգանունը՝ _____

Պաշտոնը՝ _____

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի/«IBRD» միջև «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրի (Վարկ թիվ 9202-AM) հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն